Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա.Մինասյան

,,----------,, ---------- 2019թ

ՀՀ ԿԳՄՍՆ «ԸՆՏԱՆԻՔ» ՄՊՍԿ ՊՈԱԿ-ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Մանկավարժական խորհուրդը /այսուհետ Խորհուրդ/ ստեղծվում է հաստատության կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով:

1.2 Խորհուրդը գործում է ըստ կենտրոնի կանոնադրության:

1.3 Խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում:

1.4 Խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

1.5 Խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

1.6 Խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, գեղարվեստական մասի վարիչը, ավագ և կազմակերպիչ մանկավարժները և մանկավարժական աշխատողները, ինչպես նաև հիմնադրի և ծնողական համայնքի ներկայացուցիչները՝ խորհրդակցական իրավունքով:

1.7 Անհրաժեշտության դեպքում նիստին հրավիրվում են բոլոր աշխատակիցները:

2. Մանկավարժական խորհրդի աշխատանքների կազմակերպումը

2.1 Խորհրդի աշխատանքը ղեկավարում է հաստատության տնօրենը, որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է:

2.2 Խորհրդի նիստերն արձանագրում է անդամների թվից ընտրված մշտական քարտուղարը:

2.3 Քարտուղարի բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար:

2.4 Քարտուղարը պատասխանատու է մանկխորհրդի արձանագրությունների լրացման ու կազմման օրինականության համար:

2.5 Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում՝ նաև արտահերթ նիստեր:

2.6 Նիստերի օրը, անցկացման վայրը, ժամը, օրակարգը նախօրոք հայտնվում է հաստատության աշխատողներին:

4. Մանկավարժական խորհուրդը որոշում է

4.1 Հաստատության աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության վերաբերյալ:

4.2 Միջազգային, հանրապետական, մարզային, քաղաքային տարաբնույթ մրցույթների, միջոցառումների, փառատոնների սաների մասնակցության վերաբերյալ:

4.3 Մասնագիտական ծրագիրը յուրացրած սաներին ավարտական փաստաթուղթ /վկայական/ տալու վերաբերյալ:

4.4 Սաներին գովասանագրով, դիպլոմներով պարգևատրելու, ինչպես նաև խրախուսական պարգևներ տալու վերաբերյալ:

4.5 Տարիֆիկացիայում, հաստիքացուցակում և գնումների պլանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

4.6 Մանկավարժներին խրախուսելու և իրենց պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

4.7 Առանձին դեպքերում հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սաներին հաստատությունից հեռացնելու վերաբերյալ:

4.8 Մանկավարժների հերթական արձակուրդ տրամադրելու վերաբերյալ:

4.9 Իրականցվող միջոցառումների ժամանակ համապատասխան հանձնարարականներ տալու վերաբերյալ:

4.10 Կենտրոնում նոր խմբակներ բացելու վերաբերյալ՝ հաշվի առնելով սաների նախասիրությունները, ծնողների խնդրանքները և կենտրոնի ֆինանսական հնարավորությունները:

4.11 Աշխատակիցներին նկատողություն կատարելու և այլ տույժեր կիրառելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով ներքին կարգապահական կաննոները:

4.12 Առանձին դեպքերում հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մանկավարժներին աշխատանքից ազատելու և սաներին հաստատությունից հեռացնելու մասին:

4.13 Ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացի վերաբերյալ այլ հարցերի վերաբերյալ:

4.14 Սովորողների ամառային հանգստի և ժամանցի կազմակերպման մասին:

4.15 Դժվար դաստիարակվող, սահմանափակ կարողություններով, ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողների բացակայությունների, հաճախելության, դաստիարակության, բարոյահոգեբանական ինչպես նաև սոցիալական աջակցության կազմակերպման վերաբերյալ: